

## ԿԱՐԾԻՔ

**Գևորգ Սամվելի Ասլանյանի «ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետության տնտեսամաթեմատիկական գնահատումը» թեմայով Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության վերաբերյալ**

Ատենախոսությունը պետական պարտքի կառավարման արդյունավետությունը որոշակի ցուցանիշներով և պարտքի կայունությունը տնտեսամաթեմատիկական մոդելներով գնահատելու վերաբերյալ է:

Հեղինակի կողմից ընտրված թեմայի արդիականությունը և հրատապությունը ստացել է հիմնավորում, ինչպես նաև հետազոտված թեման խիստ կարևոր է:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Առաջին գլխում՝ «Պետական պարտքի գնահատում և վարկանիշավորում», նախ ներկայացվում է ընդհանուր պետական պարտքը, տրվում են ՀՀ պետական պարտքի վերաբերյալ կարևոր սահմանումներ: Այնուհետև ներկայացվում են պետական պարտքի բեռը և սպասարկումը բնութագրող ցուցանիշները, դրանց ռիսկայնության շեմերը, ինչպես նաև պարտքի կառավարման ռիսկերը:

Երկրորդ գլխում՝ «Պետական պարտքի կառավարումն ու կայունությունը: Գնահատման մոդելներ», ներկայացվում է ընդհանուր պարտքի կայունության էությունը և այն բնութագրող հասկացությունները, վերլուծվում և ներկայացվում է պարտքի կայունության գնահատման դետերմինիստիկ մոդելը, դրա առավելությունները, դրանում կիրառվող մակրոտնտեսական շոկերը, պարտքի կայունության և խոցելիության գնահատման ցուցանիշներն ու դրանց շեմերը: Գլխի երրորդ բաժնում ներկայացվում են պարտքի կայունության գնահատման ստոխաստիկ մոտեցումները, այս մոդելների առավելություններն ու թերությունները: Գլխի վերջին բաժնում ներկայացվում են պարտքի կառավարման ռազմավարության նպատակները, դրանց մշակման հաջորդական քայլերն ու պետական պարտքի կառավարման ռազմավարության գնահատման մոդելը:

Երրորդ գլխում՝ «ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետության գնահատումը», ներկայացվել է ՀՀ պետական պարտքի, արտաքին պետական պարտքի բեռը և սպասարկումը բնութագրող ցուցանիշների դինամիկան: Այնուհետև, MAC DSA

դետերմինիստիկ մոդելի միջոցով գնահատվել է ՀՀ Կառավարության պարտքի կայունությունը մոդելի կողմից առաջարկվող այլընտրանքային սցենարների և մակրոֆիսկալ շրկերի դեպքում: Պարտքի կայունությունը գնահատվել է նաև հեղինակի կողմից մշակված՝ համաշխարհային տնտեսական և քաղաքական փոփոխությունների, ինչպես նաև հայ-ադրբեջանական հակամարտության հնարավոր սրացման հետևանքով առաջացող տնտեսական շրկերի դեպքում: VAR վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելի միջոցով գնահատվել է պետական պարտքի և պարտք ձևավորող գործոնների փոխադարձ ազդեցությունը տարեկան և եռամսյակային տվյալների հիման վրա: Գլխի վերջին բաժնում իրականացվել է պարտքի կառավարման 3 ռազմավարությունների մշակումն ու դրանց համեմատական գնահատումը:

Կատարված տեսական ուսումնասիրությունների և էմպիրիկ վերլուծությունների հիման վրա «Եզրակացություններ» բաժնում ներկայացվել են համապատասխան եզրահանգումներ:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նկատված դիտարկումներից հատկանշական են համարում ստորև նշվածները.

1. Էջ 18-ում՝ «... այս ցուցանիշը վտանգավոր է համարվում սկսած 40-70%-ից:», պարզ չէ, թե որտեղից են վերցված թվերը և ինչու է նշվում նման մեծ միջակայք:
2. Էջ 19-ում տոկոսադրույքի ռիսկի մասին դատողությունները նպատակահարմար է զուգորդել տոկոսադրույքների ընթացիկ մակարդակի, և դրանց սպասվող միտումների հետ:
3. Էջ 68-ում նշվում է, որ
  - Պարտք/ՀՆԱ ցուցանիշը նվազել է մոտ 18տ.կ.: Որպես նվազման նպաստում նախ նշվում է տնտեսական բարձր աճը, ապա՝ փոխարժեքի արժևորումը: Ցանկալի կլիներ տեսնել նպաստումները, կարծում եմ պատճառահետևանքային ոչ ճիշտ պատկեր է ներկայացված:
  - պարտքի ցուցանիշները նվազել են՝ բարելավելով երկրի վարկանիշը, ցանկալի կլիներ տեսնել հղում վարկանշող կազմակերպությունների մեթոդաբանության կամ նրանց հայտարարությունների, որը կհաստատեր նշված միտքը:
4. Էջ 71-ում մատնանշվում է արտահանման բարձր աճը և դրա արդյունքում պարտքի որոշակի ցուցանիշի բարելավումը: Անհրաժեշտ է նաև դիտարկել, թե այդ աճած արտահանման, ո՞ր մասն է վերարտահանում, ո՞ր մասն է ՀՀ արտադրական արդյունք, և նոր կատարել նման եզրակացություն: Քանի որ, եթե ծայրակետային դեպքում արտահանումն ամբողջությամբ աճել է վերարտահանման արդյունքում և

մի օր պարզապես հնարավոր չլինի ներմուծել՝ արտահանման նպատակով, դիտարկված արտահանման աճը շատ ավելի կտրուկ կփոխակերպվի անկման: Կարծում եմ գործ ունենք «կեղծ» արտահանման հետ:

5. Էջ 76, աղյուսակ 3.1.4-ում օրինակ նշվում է, որ մինչև 5 տարի մարման ժամկետ ունեցող պարտքի կշիռը 34.3% է, այսինքն մնացած մասն ունի ավելի երկար մարման ժամկետ: Հարց է առաջանում, արդյո՞ք գնահատվել է, թե ավելի երկարաժամկետ պարտքի նման մեծ կշիռը ինչպիսի ազդեցություն է ունեցել, կամ կարող էր ունենալ պարտքի գնի վրա. իմ կարծիքով այն թանկացրել է պարտքը: Արդյո՞ք դա համեմատվել է այլ երկրների համապատասխան ցուցանիշների հետ: Եվս մեկ հարց, իսկ արդյո՞ք պարտքի կառավարման արդյունավետությունը պետք է դիտարկել նաև ռիսկ-եկամուտ (ծախս) երկրնտրանքի ներքո, արդյո՞ք նպատակահարմար է նվազեցնել ռիսկը. եթե դրա սահմանային ծախսը համեմատաբար բարձր է:

6. Աշխատանքի 3.3 մասում

- տվյալների աղբյուրները հստակ բացահայտված չեն և պարզ չէ, թե օրինակ «իրական արդյունավետ տոկոսադրույք»-ն ինչ է իրենից ենթադրում: Անհրաժեշտ է աղյուսակի տեսքով բացահայտել օգտագործված տվյալները, դրանց նկարագրությունը և աղբյուրները (ցանկալի կլիներ նաև ակտիվ հղումներով):
- VAR մոդելավորման առանցքային կետերից մեկը մոդելում կառուցվածքային սահմանափակումների կիրառումն է (փոփոխականների դասավորվածության՝ հաջորդականության սահմանումը), ինչը պետք է հիմնավորվի վիճակագրական մեթոդներով (օրինակ՝ նույնականացման Չոլեսկիի մեթոդաբանությամբ) և տնտեսագիտական մեկնաբանություններով: Հատկապես իմպուլս-արձագանքման ֆունկցիաների արդյունքները խիստ զգայուն են փոփոխականների ընտրված դասավորվածության նկատմամբ և դրանց արդյունքները կարող են տարբեր դասավորությունների դեպքում էականորեն տարբերվել միմյանցից: Աշխատանքում չի խոսվում, թե մոդելում փոփոխականներն ինչ դասավորվածությամբ են, ինչ մեթոդով է այն ընտրվել և ինչ հիմնավորմամբ:
- Տարբեր մակրոտնտեսական փոփոխականների շուկերի պարագայում մոդելի իմպուլս-արձագանքման ֆունկցիաների քննարկման ժամանակ բացահայտված չէ, թե ինչու է ընտրվել շուկի 1 ստանդարտ շեղման չափը (ինչը կրկին աշխատանքում երևում է միայն աղյուսակներից և գրաֆիկներից): Առավել նպատակահարմար կլիներ շուկերի չափերն ընտրել պատմական տվյալների գնահատման միջոցով, ինչն ավելի իրատեսական կդարձներ վերլուծության արդյունքները:

- Իմպուլս-արձագանքման ֆունկցիաների քննարկման ժամանակ շուկերի արդյունքները մեկնաբանելիս հղում է արվում տնտեսական քաղաքականության սպասվող զարգացումներին, այնինչ VAR մոդելի միջոցով ստացված արդյունքները չի կարելի մեկնաբանել նման մոտեցմամբ, քանի որ մոդելը հիմնված է փոփոխականների պատմական հիշողության վրա (շարքերի տեղեկատվության) և չի կարող արտացոլել ապագա զարգացումները:


7. Ցանկալի կլիներ հեղինակի կողմից առաջարկությունների մանրամասն ներկայացումը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 հոդվածներում:

Գևորգ Սամվելի Ասլանյանի «ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետության տնտեսամաթեմատիկական գնահատումը» թեմայով ատենախոսությունը բավարարում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին:

Հեղինակն արժանի է Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԿՈՍ  
 տնտեսագիտության թեկնածու՝ 

Վ.Ա.Մելիք-Փարսադանյան

«26» .06.2023թ.

Պարոն Վ.Ա.Մելիք-Փարսադանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար բանասիրական գիտությունների թեկնածու  


Մ.Վ. Հովհաննիսյան

«29» .06.2023թ.